ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱԼՄԱՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅՈՒՀԻ ԴԵՐԱԿԱՏԱՐԸ. ԹԱՄԱՐԱ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

(Հայկական օպերայի պատմությունից)

1933 թ. հունվարի 20-ին Երևանում՝ այն ժամանակվա Կառուցողների ակումբի ոչ մեծ սրահում, աննկարագրելի ոգևորությամբ առաջին անգամ հայերեն լեզվով ներկայացվեց Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան[1]: Այսպես իր ծնունդն ավետեց ու կյանք մտավ Երևանի երաժշտադրամատիկական հաստատությունը՝ Պետօպերայի թատրոնը: Հետագայում՝ 1939 թ., այն անվանակոչվեց մեծն Սպենդիարյանի անվամբ ու դարձավ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն: Իշխանուհի Ալմաստի առաջին դերակատարուհին Երևանի օպերային թատրոնի բեմին հրավիրյալ երգչուհի Ե. Ռոմանովան էր, ով ներկայացավ անդրանիկ ներկայացումների ժամանակ: Սակայն այդ դերերգի առաջին հայ կատարող, Երևանի պետկոնսերվատորիայի շրջանավարտ, երիտասարդ երգչուհի Թամարա Շահնազարյանն էր, ով այդ դերով հանդես եկավ 1933 թ. ապրիլի 22-ի ներկայացմանը[2]:

Թամարա Կոնստանտինի Շահնազարյանը (Մելիք-Շահնազարյան) ծնվել էր Բաքվում 1901 թ.: Նա անվանի գրող-հրապարակախոս, երգիծաբան ու լրագրող Կոնստանտին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խեչան) դուստրն էր: 1922 թվականից սովորել էր կոմպոզիտոր, մանկավարժ և մշակութային գործիչ Ռոմանոս Մելիքյանի կազմակերպած Երևանի երաժշտական ստուդիայում՝ աշակերտելով երգչուհի, վոկալի դասատու Արուս Բաբայյանին (Ռ. Մելիքյանի կինն էր): Երբ 1923 թ. Երաժշտական ստուդիան վերանվանվեց ու դարձավ Երևանի Պետկոնսերվատորիա, Թ. Շահնազարյանն ուսումը շարունակեց այդտեղ՝ օպերային երգեցողության բաժնի Հ. Կագարյանի ղեկավարած դասարանում: 1931 թ. ավարտելով Պետկոնսերվատորիան՝ նա ընդգրկվեց անվանի երգիչներ Շ. Տալյանի, Հ. Դանիելյանի և Լ. Իսեցկի-Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կազմակերպած օպերա-օպերետա-

---

[1] Տե՛ս Ա. Ոսկերչյան. Մեծ հաղթանակ կուլտուրական հեղափոխության ֆրոնտում.– «Խորհրդային Հայաստան», 20. I. 1933, Վ. Թոթովենց. Պետական օպերան.– «Խորհրդային Հայաստան». 21. I. 1933, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի (այսուհետև՝ ԱՍՏԹ) ֆոնդ, օպերայի երևանյան առաջին բեմադրության ազդագիրը՝ ՄՄ -841:

[2] Այդ մասին տե՛ս «Երեկոյան Երևան. թերթում (17. XII. 1971 թ.) հրատարակված «Օրերի մշուշի մեջ» վերնագիրը կրող օպերայի ստեղծմանն ու իր գործունեությանը վերաբերող Թ. Շահնազարյանի մեկ այլ հուշում:

յին արտիստական խմբում: Այդ խումբը հեղինակավոր դիրիժոր Գ. Բուդաղյանի ղեկավարությամբ, Պետկոնսերվատորիայի նվագախմբի հետ առաջին փորձերն էր անում Կառուցողների տան (հետագայում՝ ՍովՊրոֆի թատրոն, այժմ՝ Ստանիսլավսկու անվ. ռուսական թատրոն) սրահում: 1932 թ. մայիսի սկզբին ՀԽՍՀ ժողկոմխորհի որոշմամբ այդ խումբը պաշտոնապես կազմակերպվեց որպես Երևանի պետօպերայի թատրոն, որի տնօրեն նշանակվեց ռեժիսոր Գ. Հովհաննիսյանը (Կիմիկ), իսկ գեղարվեստական ղեկավար՝ Ռ. Մելիքյանը: Եվ ահա, 1933 թ. հունվարի 20-ին հենց արտիստական այդ խումբն էլ (Շ. Տալյան, Լ. Իսեցկի-Հովհաննիսյան, Ա. Ավագյան, Ի. Վարդանով, Ա. Անանյան, Մ. Սեդմար, Ս. Տալյան, Գ. Բաբախանյան, Մ. Գասպարյան, Ս. Վարդանյան և ուրիշներ) Երևանում առաջին անգամ ներկայացրեց «Ալմաստ» օպերան:

Մեծ էր ոգևորությունը. անշուշտ, ջերմ էր նաև մամուլի արձագանքը: Իսկ Թ. Շահնազարյանը, փաստորեն, հենց հիմնադրման օրից՝ 1932 թ. մայիսից մինչև 1948 թ., որպես մեներգչուհի, աշխատեց Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում: Ալմաստից բացի, այդ տարիներին նա այլ դերերգերով էլ հանդես եկավ մեր օպերային թատրոնի բեմում՝ ժամանակի ընթացքում դառնալով լավագույն մենակատարներից մեկը: Թ. Շահնազարյանի կատարած հաջողված դերերգերից էին Անուշի մոր դերերգը Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայում, Մարիամի դերերգը Լ. Խոջա-Էյնաթյանի «Նամուս» օպերայում, կոմսուհու և Լարինայի դերերը Պ. Չայկովսկու «Պիկովայա դամա» և «Եվգենի Օնեգին» օպերաներում, Ամներիսը՝ Ջ. Վերդիի «Աիդա» և Զիբելը Շ. Գունոյի «Ֆաուստ» օպերաներում:

Թ. Շահնազարյանը զբաղվում էր նաև մանկավարժական գործունեությամբ: 1945–1978 թթ. (մինչև կյանքի վերջը) նա դասավանդում էր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1953–1976 թթ. մի քանի անգամ ընտրվել է ամբիոնի վարիչ և ղեկավարել մեներգեցողության ամբիոնը: Մեր անվանի երգիչ-երգչուհիներից շատերը (Գոհար Գալաչյան, Արշավիր Կարապետյան, Սվետլանա Կոլոսարյան և ուրիշներ) հենց նրա աշակերտներն են եղել: 1961 թվականից Թ. Շահնազարյանը կոնսերվատորիայի պրոֆեսոր էր, նույն թվականին նրան շնորհվեց նաև Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի կոչում: Նա վախճանվել է 1978 թ. Երևանում: Նրա երաժշտական գործունեության, Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի երևանյան առաջին բեմադրության, այդ օպերայի մեծանուն հեղինակի հետ ունեցած իր հանդիպումների մասին 1973 թ. հուլիսի 22-ով թվագրված նրա հուշերը, որ ձեռագիր վիճակում (ռուսերեն) պահպանվում են Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանում[3], հայերեն թարգմանությամբ ներկայացնում ենք ընթերցող հանրությանը:

---

[3] *Տե՛ս ԱՍՏԹ ֆոնդ, ՄՄ № 516:*

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՈՎԻ ՄԱՍԻՆ

Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովի մասին, մեր երաժշտական մշակույթի պատմության մեջ նրա ունեցած կարևոր դերի ու նշանակության, Հայաստանում նրա ծավալած գործունեության վերաբերյալ գրել են, գրում են ու դեռ կգրեն արվեստաբաններ, կոմպոզիտորներ, պատմաբաններ, ինչպես նաև այն մարդիկ, ովքեր նրան ավելի մոտիկից են ճանաչել, քան ես: Ճիշտ է, ես նրան տեսել եմ մեզ մոտ՝ Էրիվան ժամանելու առաջին իսկ օրերից մինչև իր կյանքի վերջը: Նրա ղեկավարությամբ լսել եմ իր իսկ սիմֆոնիկ երկերից կազմված համերգները, լսել ու տեսել եմ, թե նվագախմբի փորձերի ժամանակ ինչպես է նա աշխատում երաժիշտների հետ, ինչ մանրակրկիտությամբ է մշակում երաժշտական առանձին հատվածները: Հաճախ տեսել եմ նրան նաև մտախոհ, մի այլ աշխարհի նայող մարդու դեմքով փողոցով քայլելիս, երբ ուշադրություն չդարձնելով փողոցի ու մայթերի անցուդարձին գնում է չգիտես ուր և ինչու: Տեսել եմ նրան մեր աշակերտական երեկոներին՝ ուրախ ու ծիծաղկոտ: Բայց մոտիկ, անձնական շփումներ, անմիջական փոխհարաբերություններ նրա հետ ես չեմ ունեցել, քանզի այն ժամանակ ես դեռ կոնսերվատորիայի ուսանողուհի էի և պարզ է, որ Սպենդիարովն ինձ համար մի անհասանելի մեծություն էր: Չէի էլ կարող մտածել, թե կարող եմ մոտենալ ու խոսել հետը, թեև մեզ՝ ուսանողներիս հետ նա իրեն ընկերավարի էր պահում: Սպենդիարովի Հայաստան ժամանելը մեծ իրադարձություն էր մեզ՝ ուսանողներիս համար: Մենք հպարտանում էինք, որ Սպենդիարովը պիտի ապրի Էրիվանում և աշխատի Կոնսերվատորիայում: Նա մեզ ինչ-որ արտակարգ մարդ էր թվում, ոչ այնպիսին՝ ինչպես մյուսները: Այն հմայքը, այն զարմանալի ներքին մաքրությունը, որով ներծծված էր նրա ողջ էությունը, տարանջատում էր նրան բոլորից, դարձնում առանձնահատուկ, մյուսներին չնմանվող: Մենք՝ երգիչներս, մի քիչ նախանձում էինք նվագախմբի անդամներին, քանի որ Սպենդիարովը նրանց հետ շփվելու ավելի շատ առիթներ ուներ, քան մեզ հետ: Մենք գիտեինք, որ նա «Ալմաստ» օպերա է գրել. ասում էին նաև, որ գլխավոր՝ Ալմաստի դերն իր դստեր՝ Մարինայի համար է գրել: Պատահաբար իմացա, որ «Ալմաստ» օպերայում մեցցոսոպրանոյի համար գրված կանացի մի դերերգ էլ կա՝ Գայանեի դերերգը: Ես հոգուս խորքում երազում էի՝ երբևիցե երգչուհի դառնալ ու բեմի վրա կատարել Գայանեի դերերգը: Եվ ո՞վ կմտածեր, որ տարիներ անց, 1933 թվականին, Հայաստանում օպերային թատրոնի բացման ժամանակ ինձ բախտ կվիճակվեր ելույթ ունենալու «Ալմաստ» օպերայում ոչ թե Գայանեի, այլ հենց Ալմաստի պարտիայով: Երջանկության այդ զգացումը, որ առաջին հայուհի Ալմաստը մեր օպերայի բեմին

հենց ես եմ եղել՝ ողջ կյանքում հոգուս մեջ եմ պահել: Ափսոս, շատ ափսոս, որ Սպենդիարովը չապրեց մինչև այդ օրերը, որ լսեր ու տեսներ իր ստեղծագործությունը բեմի վրա:

Ողջ կյանքում ես հիշողությանս մեջ պահել, պահպանել եմ Ալեքսանդր Աֆանասևիչի հետ իմ՝ ուսանողուհուս ունեցած մի խոսակցություն: Երբ առիթ է լինում այն կրկին վերհիշելու՝ իմ հոգին ջերմությամբ է լցվում մեր սիրելի Սպենդիարովի նկատմամբ: 1928 թվի ապրիլի 16-ին, Կուլտուրայի տանը (այժմ՝ ֆիլհարմոնիայի փոքր դահլիճ) Սպենդիարովի և Տեր-Ղևոնդյանի սիմֆոնիկ ստեղծագործություններից կազմված համերգ տրվեց: Ես մեծ պատիվ ունեցա այդ համերգի առաջին բաժնում հանդես գալու Տեր-Ղևոնդյանի երկու ստեղծագործությունների կատարմամբ: Երկրորդ բաժնում կատարվեցին Սպենդիարովի ստեղծագործությունները: Կոմպոզիտորներն իրենք էին ղեկավարում իրենց ստեղծագործությունները: Ինքնին հասկանալի է, որ ինձ պես ուսանողուհու համար առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ հանդես գալը, այն էլ նման պատասխանատու համերգի ժամանակ՝ և շատ հուզիչ էր և երկյուղալի: Սրտի թրթիռով ես մտա բեմին կից սպասասենյակը: Այնտեղ աղմկոտ էր և նեղվածք՝ նվագախմբի բոլոր անդամները պատրաստվում էին բեմ բարձրանալ: «Դե, քեզ պինդ պահիր, ուշադիր լսիր նվագախմբին»,– առաջ անցնելով ասաց Անուշավան Գրիգորևիչ Տեր-Ղևոնդյանն ու բեմ բարձրացավ: Համերգն սկսվեց: Որքան մոտենում էր իմ ելույթի պահը, հուզմունքս այնքան մեծանում էր: Իմ ելույթին նախորդող համարից առաջ սպասասենյակի դուռը բացվեց և ներս մտավ Ալեքսանդր Աֆանասևիչը: Աթոռից վեր բարձրանալով և խոնարհվելով՝ ես ողջունեցի նրան: «Մեզ հետ ելույթ եք ունենալու»,– հարցրեց նա: «Այո»,– պատասխանեցի ես: «Շատ հիանալի է»,– ասաց Սպենդիարովը: «Վախենում եմ»,– ասացի ես: «Այդ մեկը հիանալի չէ, դե համարձակ, համարձակ»,– ասաց նա ու անցավ իմ մոտից: Այնուհետև իմ ելույթն էր լինելու: Աստիճաններով բեմ բարձրանալիս ես ջանում էի հավաքել ինքս ինձ՝ մտովի կրկնելով Սպենդիարովի բառերը. «Համարձակ, համարձակ»: Տեր-Ղևոնդյանի երկու երգերն էլ ես հաջողությամբ կատարեցի, թեև հոգուս խորքում փոքր-ինչ տխուր էի, քանի որ երկրորդ երգի վերջում քիչ մնաց շեղվեի նվագախմբից: Բայց մեծարվելու համար կրկին բեմ կանչվելուց հետո ես ուրախ ու ոգևորված հեռացա բեմից դեպի սպասասենյակ: Բեմում նվագախումբն ավարտում էր համերգի առաջին բաժինը: Սպասասենյակում Սպենդիարովից բացի մի քանի մարդ էլ կար, որոնց հետ նա ոգևորված զրուցում էր: Տեսնելով ինձ՝ Սպենդիարովն իր խոսքն ընդհատեց, ժպտալով ինձ ասաց. «Դե ինչ, վախն անցա՞վ, այ հիմա կեցցեք Դուք»,– և ակնոցի միջից ինձ նայեցին նրա բարի աչքերը: Ես լցվել էի երջանկության զգացումով նրա համար, որ ելույթ ունեցա այդպիսի կարևոր համերգին, որ երկրորդ անգամ ինձ բեմ կանչեցին՝ մեծարելու, որ Ալեքսանդր Աֆանասևիչն ինձ գովեց ու ջերմ խոսքե-*

ռով բարձացրեց տրամադրությունս: Այն ժամանակ ինձ պես մի ուսանողուհու համար արժեքավոր էր նշանավոր կոմպոզիտորի աննշան թվացող խոսքն անգամ, թեկուզ այն ասված լիներ հենց այնպես, իմիջայլոց: Այն ինձ վստահություն, ավելի լավ պարապելու և լավ երգչուհի դառնալու ցանկություն էր ներշնչում: Խոսակցությունն ասես անկարևոր բանի մասին էր, բայց այն մտավ հոգուս մեջ, հիշվեց ողջ կյանքում, անմոռաց մնացին նաև նրա ժպիտը, բարի աչքերի փաղաքշող հայացքը:

Հիմա, վերլուծելով իմ այն ժամանակվա բարձր տրամադրության պատճառը, որ Սպենդիարովի երկու, երեք բառերն էին եղել, ես խորհում եմ, թե որքան մեծ նշանակություն կարող է ունենալ սկսնակ երաժիշտի համար ջերմ, մտերմիկ խոսքը, ինչպես կարող է այն ջերմացնել, ոգևորել սիրտդ ու պահպանվել ողջ կյանքում:

Մի դրվագ ևս, որ դրոշմվել է իմ հիշողության մեջ: Երբ Սպենդիարովը դեռ նոր էր եկել Էրիվան, չգիտեմ ի՞նչ առիթով, Կոնսերվատորիայում երեկո կազմակերպվեց: Մենք, ուսանողներս, պարում, ուրախանում էինք: Մեր Կոնսերվատորիայի տարածքն այն ժամանակ շատ փոքր էր՝ ընդամենը երեք սենյակ: Այն սենյակում, որտեղ մենք դաշնամուրի դասարանի պարապմունքներն էինք անցկացնում, ինչ որ մեկը նստեց ռոյալի մոտ ու սկսեց «Էնզելի» նվագել: Պարի շրջան մտավ մեր երգչուհի-ուսանողուհիներից մեկը՝ Հասմիկ Բարխուդարյանը, Լուսավորության Ժողովրդական կոմիսար Ասքանազ Մռավյանի կինը: Հասմիկը գեղեցիկ արտաքին ուներ, չտեսնված կազմվածք: Սահուն, հիանալի կերպով նա սկսեց պարել: Այդ ժամանակ սենյակ մտավ Սպենդիարովը և առաջ անցնելով՝ սկսեց նայել պարող Հասմիկին: Երբ նա պարն ավարտել և ցանկանում էր դուրս գալ շրջանից, Ալեքսանդր Աֆանասևիչը խնդրեց նրան՝ կրկնել պարը: Կատարելով նրա ցանկությունը՝ Հասմիկը մեր բուռն ծափողջույնների ներքո, կրկին սկսեց պարել: Ծափահարում էր նաև Սպենդիարովը: Ինչպես հետո խոսում էին ուսանողների շրջանում՝ լսելով ու տեսնելով «Էնզելի» պարող Հասմիկ Բարխուդարյանին, Ալեքսանդր Աֆանասևիչը գրեց իր «Էնզելի»-ն սիմֆոնիկ նվագախմբի համար և ընդգրկեց «Էրիվանի էտյուդներ»-ի մեջ: Հաստատել այս փաստը չեմ կարող, բայց այն ժամանակ մենք՝ ուսանողներս այդպես լսել էինք ու հավատում էինք, որ այդպես է:

Ահա այն ամենը, ինչ ես կարող եմ հիշել իմ ուսանողական տարիներից՝ Ալեքսանդր Աֆանասևիչ Սպենդիարովի մասին: